ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N:272 ք.Գյումրի

ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2019 թվականի հոկտեմբերի 28-ի N:02/07.1/24556-19 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին 2019 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղվերան բնակավայր՝ Աղվերանի «Բեսթ-Վեսթերն Աղվերան» համալիրում կայանալիք շնորհանդես-աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ Գյումրի-Երևան ճանապարհածախսի, հոգում է հրավիրող կողմը:
3. Հայաստանի Հանրապետության ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ վճարել Գյումրի-Երևան ճանապարհածախսը:
4. Հրայր Կարապետյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի

վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Վաչագան Վարդանյանին:

5. Հրայր Կարապետյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է